Մեծութիւնները ողորմածաբար բարեհաճեցին հարցափորձել երգեցիկ խմբի կազմակերպող Իրեցկուց. և այս ժամանակ ուսանողուհիները բաղդ ունեցան մատուցանելու Նորին Մեծութեան՝ իրանց սեպհական աշխատութեամբ պատրաստած սրփոռոց, որոյ մակագիրն էր «Բաղուի Մարիամեան գիմնազիոնից»։ Սփռոցի լայն և մորենագոյն թաւշեայ եզերքը ասեղնագործած էր մետաքսով և ոսկով պարսկական ճաշակով։ Նորին Մեծութիւնն բարեհաճեց շնորհակալել ձեռագործութեան ուսուցչուհոյն։ Գիմնազիոնի աշակերտուհիներով և Իէալական դպրոցի աշակերտներով՝ Իէալականների նուագածութեամբ մասնակցութեամբ երգէհոնի և դաշնամուրի՝ բարեհաճեցին անցանել Ս. Նունէի դպրոցը։ Այս տեղ օգոստափառ Այցելուներին դիմաւորեցին փոխ–նահանգապետ Դ. Ս. Ս. Բենեսլաւսկին, տիկին Սիմեանեկովան և ուրիշ կանայք. դպրոցը մտնելու ժամանակ գիմնազիոնի այդ տարուայ ընթացաւարտ օր. Նակուրովսկայան արժանացաւ բաղդի ողջունել Նոցին Մեծութիւններին ճառով։ Նոցին Մեծութիւնները Ս. Նունէի դպրոցից բարեհաճեցին անցնել նոր եկեղեցւոյ հիմնարկութեան տեղը, ուր հանդիպեցին հոգեւորականութեան և Վրաց Էքզարքոսին՝ եկեղեցական զգեստով. յետոյ կատարուեց գոհացողական մաղթանքը, որոյ աւարտումից յետոյ՝ Նոցին Մեծութիւնները առաջնորդուելով հոգեւորականութեամբ՝ անցան հիմնարկութեան տեղը։ Սկզբից տեղը ցօղուած էր ս. ջրով և օծուած էր մեռոնով։ Դրանից յետոյ տաճարի հիմքի մէջ դրուեցան ուղղափառ եկեղեցւոյ ս. մասունքներ արծաթեայ տփի մէջ զետեղած. և ապա առաջին քարը դրեց թագաւոր Կայսրը, երկրորդը թագուհի Կայսրուհին, երրորդը թագաժառանգ Կայսրորդին և չորրորդը մեծ իշխան Գէորգի Ալէքսանդրովիչը։ Քարերի վերայ դրուեցան գրած տախտակ՝ նշանակելով տարին և ամիսը հիմնարկութեան, որը հենց այնտեղ կարդացուեց հանդիսականների առաջին և էր այսպէս.

«Յանուն Հօր և Որդւոյ և սուրբ Հոգւոյն. Հիմնուեց այս եկեղեցիս ի յիշատակ Մեծ իշխան Ալէքսանդր Նեվսկու, Ինքնակալ ամենողորմած մեծ Թագաւորի մեր Ալէքսանդր Ալէքսանդրովչի